

«ԱՐԱՐԱՏ ՖՈՒՏԲՈՒԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ» ՀԶ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Պետական ռեգիստրի գրանցման համար
Պետական ռեգիստրի գրանցման վկայականի համար
Պետական ռեգիստրի գրանցման ամսաթիվ
Գտնվելու վայրը

264.120.04567
01 Ա.044055
23.12.1998
ՀՀ, ք. Երևան, 0025, Ագաթանգեղոսի փող. 2

Բովանդակություն

- 3 Անկախ աուդիտորական եզրակացություն
- 6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
- 8 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
- 10 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
- 11 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
- 12 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ



ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Արարատ ֆուտբոլային ակումբ» ՀԶ Փակ Բաժնետիրական Ընկերության Ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արարատ ֆուտբոլային ակումբ» ՀԶ Փակ Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի, գուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում

բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունների՝ օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները՝ ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ
22 ապրիլի, 2026թ.
Ք. Երևան, Վաղարշյան 12

Աննա Ավետիսյան
Տնօրեն-Բաժնետեր
Աուդիտի ղեկավար



**«ԱՐԱՐԱՏ ՖՈՒՏԲՈՒԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ» ՀՀ ՓԲԸ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ**

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4	40,756	23,188
Դեբիտորական պարտքեր ֆուտբոլիստների տրանսֆերների գծով		-	-
Դեբիտորական պարտքեր ՈԻԵՖԱ համերաշխության վճարների գծով	6	-	-
Դեբիտորական պարտքեր խմբի կամ կապակցված կողմերի գծով	6	-	-
Այլ դեբիտորական պարտքեր	6	14,151	21
Տրված կանխավճարներ	6	920	5,591
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	6	5,497	3,784
Ընթացիկ հարկային ակտիվներ	6	13,289	7,948
Տրված փոխառություններ կապակցված կողմերին	5	138,181	209,759
Տրված փոխառություններ երրորդ կողմերին	5	4,970	4,970
Պաշարներ		-	-
Այլ ընթացիկ ակտիվներ		-	-
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		217,764	255,261
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	105,922	87,079
Ոչ նյութական ակտիվներ - խաղացողներ		-	-
Ոչ նյութական ակտիվներ – այլ		-	-
Դեբիտորական պարտքեր խաղացողների տրանսֆերների գծով		-	-
Դեբիտորական պարտքեր խմբի/կապակցված կողմերի գծով		-	-
Դեբիտորական պարտքեր (այլ)		-	-
Հետաձգված հարկային ակտիվներ		4,485	4,944
Ներդրումներ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		110,407	92,023
Ընդամենը ակտիվներ		328,171	347,284
Պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Բանկային օվերդրաֆտներ		-	-
Բանկային և այլ վարկեր		-	-
Խմբից կամ կապակցված կողմերից ստացված փոխառություններ		33,438	-
Երրորդ կողմերից ստացված փոխառություններ		287,014	-
Կրեդիտորական պարտքեր խաղացողների տրանսֆերների գծով		-	-
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և այլ հատուցումների գծով	10	42,860	24,070
Կրեդիտորական պարտքեր սոցապ/հարկային մարմինների կողմից	10	10,683	13,739
Կրեդիտորական պարտքեր հարկերի և այլ վճարների գծով	10	1,270	1,270
Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով		-	-
Կանխավճարներ և հետաձգված եկամուտ	10	-	-

«ԱՐԱՐԱՏ ՖՈՒՏԲՈՒԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ» ՀՀ ՓԲԸ
 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 2025թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
 (շարունակություն մաս 2)

Հազար դրամ	Ծանոթ.	Ծանոթ.	
		2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ կրեդիտորական պարտքեր	10	62,442	50,869
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով		5,000	-
Ընթացիկ պահուստներ	11	24,917	27,466
Այլ կարճաժամկետ պարտավորություններ		-	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		467,624	117,414
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Բանկային և այլ վարկեր		-	-
Կապակցված կողմերից ստացված փոխառություններ	9	-	41,942
Երրորդ կողմերից ստացված փոխառություններ	9	343,314	660,732
Կրեդիտորական պարտքեր խմբին/կապակցված կողմերին		-	-
Կրեդիտորական պարտքեր խաղացողների տրանսֆերների գծով		-	-
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և այլ հատուցումների գծով		-	-
Կրեդիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով		-	-
Այլ հարկային պարտավորություններ		-	-
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով		28,300	-
Այլ կրեդիտորական պարտքեր		-	-
Կանխավճարներ և հետաձգված եկամուտ		-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ		-	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	494	572
Երկարաժամկետ պահուստներ		-	-
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		372,108	703,246
Ընդամենը պարտավորություններ		839,732	820,660
Զուտ ակտիվներ		(511,561)	(473,376)
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	8	1,566,000	1,566,000
Կուտակված վնաս		(2,077,561)	(2,039,376)
Պահուստներ		-	-
Ընդամենը սեփական կապիտալ		(511,561)	(473,376)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ. ապրիլի 22-ին՝

Գործադիր տնօրեն
 Տիգրան Ղարաբաղյան



Գլխավոր հաշվապահ
 Ալբերտ Մարգարյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

**«ԱՐԱՐԱՏ ՖՈՒՏԲՈՒԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ» ՀՀ ՓԲԸ
ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՄԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ**

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
Հասույթ			
Տոմսերի իրացում		-	-
Հովանավորչություն և գովազդ		26,734	17,321
Հեռարձակման իրավունքներ		-	-
Առևտրական գործունեություն		281	-
ՈՒԵՖԱ-ի համերաշխության և մրցանակային գումարներ		181,742	52,926
Ֆուտբոլի ազգային մարմնից դրամաշնորհներ, նվիրատվություններ		11,000	6,000
Այլ գործառնական եկամուտ	13	7,155	3,203
Ընդամենը հասույթ		226,912	79,450
Ծախսեր			
Աշխատավարձի գծով ծախսեր (խաղացողներ)		(185,613)	(194,734)
Աշխատավարձի գծով ծախսեր (այլ աշխատակիցներ)		(153,119)	(179,085)
Հիմնական միջոցների մաշվածություն		(16,157)	(14,209)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա (բացառությամբ խաղացողների գրանցման հետ կապված ծախսերի)		-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում (բացառությամբ խաղացողների գրանցման հետ կապված ծախսերի)		-	-
Այլ գործառնական ծախսեր	14	(119,250)	(143,107)
Ընդամենը գործառնական ծախսեր (բացառությամբ խաղացողների գրանցման հետ կապված ծախսերի)		(474,139)	(531,135)
Գործառնական գործունեությունից շահույթ/ վնաս		(247,227)	(451,685)
Խաղացողների գրանցման ձեռքբերում և օտարում			
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա (խաղացողների գրանցում)		-	-
Ոչ նյութական ակտիվների արժեզրկում (խաղացողների գրանցում)		-	-

«ԱՐԱՐԱՏ ՖՈՒՏԲՈՒԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ» ՀՁ ՓԲԸ
 ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՄԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ
 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 2025թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ
 (շարունակություն մաս 2)

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ.	2024թ.
		դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա	դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
Գրանցման ձեռքբերմանն ուղղված ծախսեր (ներառյալ չկապիտալացված վճարներ գործակալներին/միջնորդներին և խաղացողների վարձակալության վճարներ)		(94,721)	(10,068)
Խաղացողների գրանցման օտարումներից եկամուտներ (ներառյալ վարձակալությունից եկամուտ)		181,460	24,338
Ընդամենը խաղացողների գրանցման ձեռքբերում և օտարում		86,739	14,270
Հիմնական միջոցների օտարումից օգուտ/վնաս		-	-
Ոչ նյութական ակտիվների օտարումից օգուտ/վնաս		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվների օտարումից օգուտ/վնաս		-	-
Ֆինանսական եկամուտ	16	124,408	-
Ֆինանսական ծախս	16	(2,720)	(1,039)
Զուտ օգուտ/վնաս փոխարժեքային տարբերությունից	17	6,231	2,046
Զուտ ֆինանսական եկամուտ (ծախս)		127,919	1,007
Այլ ոչ գործառնական եկամուտներ		-	-
Այլ ոչ գործառնական ծախսեր	15	(5,157)	(2,937)
Այլ ոչ գործառնական գործունեության արդյունք		(5,157)	(2,937)
Շահույթ/վնաս մինչև հարկերը		(37,726)	(439,345)
Շահութահարկի գծով ծախս	18	(459)	2,025
Տարվա վնաս		(38,185)	(437,320)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո			
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ		(38,185)	(437,320)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

«ԱՐԱՐԱՏ ՖՈՒՏԲՈՒԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ» ՀՀ ՓԲԸ
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
2024թ հունվարի 1-ի դրությամբ	1,566,000	(1,602,056)	(36,056)
Տարվա վնաս	-	(437,320)	(437,320)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(437,320)	(437,320)
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,566,000	(2,039,376)	(473,376)
Տարվա վնաս	-	(38,185)	(38,185)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(38,185)	(38,185)
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,566,000	(2,077,561)	(511,561)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

«ԱՐԱՐԱՏ ՖՈՒՏԲՈՒԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ» ՀՀ ՓԲԸ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Տարվա վնաս	(38,185)	(437,320)
<i>Ճշգրտումներ</i>		
Շահութահարկի գծով ծախս	459	(2,025)
Մաշվածության ծախս	16,157	14,209
Շնորհից եկամուտ	(78)	(52)
Ֆինանսական եկամուտ	(124,408)	-
Ֆինանսական ծախս	2,720	1,039
Այլ ֆինանսական հոդվածներ	(6,231)	(2,046)
Գործառնական վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	(149,566)	(426,195)
Պաշարների փոփոխություն	-	200
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	(197,973)	(26,643)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	115,059	70,886
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	(232,480)	(381,752)
Վճարված շահութահարկ	-	-
Վճարված տոկոս	-	(1,039)
<i>Գործառնական գործունեության համար օգտագործված գույտ դրամական միջոցներ</i>	<i>(232,480)</i>	<i>(382,791)</i>
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Դրամական միջոցներ խաղացողների գրանցման օտարումից	181,460	24,338
Վճարումներ խաղացողների գրանցումներ ձեռք բերելու նպատակով	(94,721)	(10,068)
Տրամադրված փոխառություններ կապակցված կողմերին	71,578	4,271
Ստացված տոկոս	-	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում, գույտ	-	(2,771)
Ներդրումային գործունեությունից ստացված գույտ դրամական միջոցներ	158,317	15,770
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Շնորհի ստացում	-	624
Վարկերի ստացում, գույտ	-	(38,543)
Փոխառությունների ստացում կապակցված կողմերից, գույտ	(8,235)	405,569
Փոխառությունների ստացում երրորդ կողմերից, գույտ	94,004	(129)
Ֆինանսական գործունեությունից ստացված գույտ դրամական միջոցներ	85,769	367,521
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գույտ աճ	11,606	500
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	5,962	(948)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	23,188	23,636
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	40,756	23,188

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Արարատ ֆուտբոլային ակումբ» ՀՀ Փակ Բաժնետիրական Ընկերությունը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 1998թ. դեկտեմբերի 23-ին: Ընկերության գրանցման համարն է 264.120.04567:

Ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ: Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային համաձայնագրերի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Քաղաքացիական օրենսգրքին, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքին, այլ օրենսդրական և նորմատիվ ակտերին և հաստատված կանոնադրության պահանջներին համապատասխան:

Ընկերության հիմնական գործունեությունն է ֆուտբոլային գործունեությունը:

Ընկերության բաժնետերերն են՝

Հրաչ Կապրիեյան	79,28 %
Վարտան Սիրմակեա	19,76 %
Բարսեղ Բեգլարյան	0,32 %
«Արարատ» ՖԱ ՀԿ	0,32 %
Լիանա Անդրիասյան	0,32 %:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը մասնակիցների ժողովն է: Ժողովը հրավիրվում է տարին մեկ անգամ:

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գործադիր տնօրենը:

2025թ. Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 79 մարդ (2024թ.՝ 63 մարդ):

Ընկերության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Բ. Երևան Ագաթանգեղոս 2:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից:

2025թ. Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համաձայն:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով: Այլ չափման հիմունքներ կիրառելիս Ընկերությունը ներկայացնում է բացահայտումներ համապատասխան ծանոթագրություններում:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար:

Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

2.5 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Նշանակալի ոլորտները, որոնք ներառում են ավելի բարձր աստիճանի դատողություն, որտեղ ենթադրություններն ու գնահատումները կարևոր են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում:

2.6 Նոր և վերանայված ստանդարտներ

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են հաշվետու ժամանակաշրջանում և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Հաշվետու ժամանակաշրջանում կիրառվել են հետևյալ նոր և վերանայված ստանդարտները և փոփոխությունները.

ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» (փոփոխություններ)

Փոփոխությունները վերաբերում են պարտավորությունների դասակարգմանը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ: Պարտավորությունների դասակարգումը կախված է հաշվետու օրվա դրությամբ առկա իրավունքներից: Էական ազդեցություն չի ունեցել:

ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական ուղեցույց 2 (փոփոխություններ)

Բացահայտումների պահանջների պարզեցում՝ հաշվապահական քաղաքականությունների վերաբերյալ: Ընկերությունը ներկայացնում է էական քաղաքականությունները: Էական ազդեցություն չի ունեցել:

ՀՀՄՍ 8 «Հաշվապահական քաղաքականություններ, գնահատումներ և սխալներ» (փոփոխություններ)

Ներմուծվել է «հաշվապահական գնահատումների» հստակ սահմանում: Էական ազդեցություն չի ունեցել:

ՀՀՄՍ 12 «Շահութահարկ» (փոփոխություններ)

Կապված են հետաձգված հարկի ճանաչման հետ որոշ գործարքների դեպքում: Էական ազդեցություն չի ունեցել:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ» (փոփոխություններ)

Վարձակալության պարտավորությունների հետ կապված փոփոխություններ: Ընկերության վրա էական ազդեցություն չի ունեցել:

ՖՀՄՍ 7 և ՖՀՄՍ 9 (փոփոխություններ)

Ֆինանսական գործիքների բացահայտումների և դասակարգման որոշ ճշգրտումներ: Էական ազդեցություն չի ունեցել:

Ընկերությունը գնահատել է նաև դեռևս չկիրառված ստանդարտների ազդեցությունը և եկել է եզրակացության, որ դրանց կիրառումը չի հանգեցնի էական փոփոխությունների ֆինանսական հաշվետվություններում:

2.7 Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ:

բ) ֆինանսական արդյունքի մասին մեկ հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Ընկերությունը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց բնույթի վրա հիմնված դասակարգումը:

գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար:

դ) դրամական հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով անուղղակի մեթոդը: Վճարված տոկոսները դասակարգվում են որպես գործառնական, ստացված տոկոսներն ու շահաբաժինները՝ որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:

ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:

Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Ընկերությունը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող միջին փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները:

	2025թ. դեկտեմբերի		2024թ. դեկտեմբերի	
	31-ի	դրությամբ	31-ի	դրությամբ
Ռուբլի		4.87		3.71
ԱՄՆ դոլար		381.36		396.56
Եվրո		449.01		413.89

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Հիմնական միջոցների օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցների՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Վարձակալված ՀՄ-ների վրա կատարված կապիտալ ծախսեր /մարզադաշտ/	16 տարի,
Համակարգչային տեխնիկա	1 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	1-8 տարի
Տրանսպորտային միջոցներ	5 տարի
Արտադրական, տնտեսական գույք	1-8 տարի
Այլ հիմնական միջոցներ	1-8 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները սահմանվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Դրանք ամորտիզացվում են իրենց օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով ուղղագծային մեթոդը: Եթե կա որևէ հայտանիշ, որ տեղի է ունեցել ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի դրույթաչափի, օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի էական փոփոխություն, ապա ամորտիզացիան պետք է վերանայվի այնպես, որ արտացոլի նոր ակնկալիքները:

Ընկերությունը ֆուտբոլիստների գրանցմանն ուղղված ծախսերը ծախսագրում է ընթացիկ տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

3.4 Հիմնական միջոցների արժեզրկում

Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գույք գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Վարձակալություն

Ընկերությունը, որպես վարձակալ, մեկնարկի ամսաթվի դրությամբ ճանաչում է օգտագործման իրավունքով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ փոքրարժեք ակտիվների և վարձակալության գծով կարճաժամկետ պարտավորությունների, համաձայն ՖՀՄՍ 16-ի:

Սկզբնական ճանաչում

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է օգտագործման իրավունքով ակտիվը սկզբնական արժեքով, որը ներառում է.

- վարձակալության պարտավորության գծով սկզբնական չափման գումարը,
- վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ,
- վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, և
- այն ծախսումների գնահատականը, որը վարձակալը կկրի հիմքում ընկած ակտիվը ապամոնտաժելիս կամ քանդելիս, ինչպես նաև այդ ակտիվի զբաղեցրած տեղանքը վերականգնելիս կամ հիմքում ընկած ակտիվը վերականգնելիս՝ բերելով այն վիճակի, որը պահանջվում է վարձակալության պայմանագրի ժամկետներով և պայմաններով:

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Ընկերությունը պետք է չափի վարձակալության գծով պարտավորությունը՝ այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին: Վարձավճարները պետք է զեղչվեն՝ կիրառելով Ընկերության վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, Ընկերությունը պետք է կիրառի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Հետագա չափում

Սկզբնական արժեքի մոդել կիրառելիս Ընկերությունը պետք է չափի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնական արժեքով՝

- հանած՝ կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները և
- ճշգրտված՝ վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ:

Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալը վարձակալության գծով պարտավորությունը պետք է չափի՝

- ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար,
- նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար, և
- վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ ցանկացած վերանայում կամ վարձակալության վերափոխում, կամ վերանայված հաստատուն վարձավճարները արտացոլելու համար:

Գործառնական վարձակալությունից եկամուտը գծային հիմունքով ճանաչվում է համապատասխան վարձակալության ժամկետում:

Գործառնական վարձակալության վճարումները գծային հիմունքով ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետում:

3.6 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

Իրացման գուտ արժեքը վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման (վերանորոգման) ենթադրվող ծախսումները, ինչպես նաև վաճառքի կազմակերպման համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները: Իրացման գուտ արժեքի գնահատումները հիմնվում են պաշարների իրացումից սպասվելիք գումարի՝ գնահատման պահին հասանելի առավել արժանահավատ վկայության վրա: Այդ գնահատումները կատարելիս հաշվի են առնվում հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցած դեպքերի հետ ուղղակիորեն կապված գների կամ ծախսումների տատանումներն այնքանով, որքանով նման դեպքերը հաստատում են ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանները:

3.7 Շնորհներ

Շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են իրական արժեքով որպես հետաձգված եկամուտ:

Շնորհը ճանաչվում է որպես եկամուտ՝ սխտեմատիկ եւ ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում եւ ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

3.8 Պահուստ

Ընկերությունը պահուստը պետք է ճանաչի միայն այն դեպքում, երբ

ա) Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ունի պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է (այսինքն՝ ավելի շատ հավանական է, քան՝ ոչ), որ մարելու համար Ընկերությունից կպահանջվի փոխանցել տնտեսական օգուտներ.

գ) պարտականության գումարը կարող է արժանահավատորեն գնահատվել:

Ընկերությունը պահուստը պետք է ճանաչի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես պարտավորություն, և պետք է ճանաչի պահուստի գումարը որպես ծախս:

Ընկերությունը պահուստը պետք է չափի հաշվետու ամսաթվի դրությամբ պարտականությունը մարելու համար պահանջվող գումարի լավագույն գնահատականով: Լավագույն գնահատականն այն գումարն է, որը Ընկերությունը խելամտորեն կվճարե՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ այդ պարտականությունը մարելու կամ այդ պահին երրորդ կողմին փոխանցելու համար:

Ընկերությունը պահուստի հաշվին պետք է մարի միայն այն ծախքերը, որոնց գծով պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.9 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Ընկերությունը կիրառում է 18% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում (դիսկոնտավորվում):

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ընթացիկ և հետաձգված հարկերը պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հողվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում: Ընկերությունը շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հողվածները ներկայացնում է՝ հանելով համապատասխան հարկային հետևանքները:

Ընկերությունը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՛
բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու հետաձգված հարկային ակտիվները հարկային պարտավորությունների դիմաց, և՛

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝

-նույն հարկատուից (հարկվող միավորից), կամ՝

-տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

3.10 Սեփական կապիտալ

Ընկերության սեփական կապիտալի տարրերն են կանոնադրական կապիտալը և կուտակված շահույթը կամ վնասը:

3.11 Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից հասույթ

Խաղային օրերի հասույթը ճանաչվում է հաշվետու տարվա ընթացքում. յուրաքանչյուր խաղային օրվա հասույթ պետք է ճանաչվի, միայն երբ խաղային հանդիպումն արդեն իսկ կայացել է: Խաղային օրվա հասույթը, որը ստացվել է որպես կանխավճար մինչև հաշվետու տարվա ավարտը, սակայն վերաբերում է հաջորդ մրցաշրջանին (օրինակ՝ տոմսերի սեզոնային վաճառք), պետք է ձևակերպվի որպես հետաձգված եկամուտ (հասույթ) և ճանաչվի խաղային հանդիպումների կայացմանը զուգընթաց:

Հովանավորչություն և գովազդ

Հովանավորչությունն ու գովազդն ընդգրկում են ակումբի գլխավոր հովանավորին, այլ հովանավորների, մարզադաշտի եզրագծային և ցուցադրվող գովազդը, ինչպես նաև ցանկացած այլ տեսակի հովանավորչություն և գովազդային գործունեություն:

Հեռարձակման իրավունքներ

Հեռարձակման իրավունքներից հասույթն իրենից ներկայացնում է ՁԼՄ-ների հետ կնքված տնային պայմանագրերից ստացվող միջոցները: Հեռուստատեսային շուկայի ներկայացվածության հիման վրա բաշխվող, ինչպես նաև մասնակցության վճարները ճանաչվում են խաղային հանդիպումների կայացմանը զուգընթաց: Ակումբի խաղային նվաճումներից մրցանակային գումարները ճանաչվում են, երբ դրանց ստացումը դառնում է որոշակի:

Առևտրական հասույթ

Առևտրային հասույթը բաղկացած է մանրածախ իրացումներից, սնունդի և խմիչքի վաճառքից, համագումարների կազմակերպումից (ոչ խաղային օրերին), վիճակահաղերի կազմակերպումից և այլ կերպ չդասակարգված առևտրային հասույթից:

ՌԻԵՖԱ-ի համերաշխության և մրցանակային գումարներ

ՌԻԵՖԱ-ի մրցանակային գումարները ՌԻԵՖԱ ակումբային մրցաշարերին մասնակցության դիմաց ստացվող միջոցներն են: Հեռուստատեսային շուկայի ներկայացվածության հիման վրա բաշխվող, ինչպես նաև մասնակցության վճարները ճանաչվում են խաղային հանդիպումների կայացմանը զուգընթաց: Ակումբի խաղային նվաճումներից մրցանակային գումարները ճանաչվում են, երբ դրանց ստացումը դառնում է որոշակի: ՌԻԵՖԱ համերաշխության վճարները պետք է ճանաչվեն, երբ ստացելիք գումարը դառնում է որոշակի:

Այլ եկամուտներ

Այլ եկամուտներն ընդգրկում են նվիրատվությունները, դրամաշնորհները, ցանկացած տեսակի արտասովոր գործառնական եկամուտները, ինչպես նաև նախորդ հինգ խմբերում չդասակարգված այլ եկամուտներ:

3.12 Աշխատակիցներին հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների, ներառյալ տնօրենները և կառավարչական անձնակազմը, մատուցած ծառայության դիմաց Ընկերության կողմից ցանկացած ձևով տրվող փոխհատուցումներն են: Աշխատակիցների հատուցումներն են.

ա) աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ամբողջությամբ մարվում են այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.

բ) հետաշխատանքային հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ենթակա են վճարման աշխատանքային գործունեությունն ավարտելուց հետո.

գ) աշխատակիցների այլ երկարաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի հետաշխատանքային հատուցումներից և ազատման նպաստներից), որոնք ոչ ամբողջությամբ են մարվում այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.

դ) ազատման նպաստներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են, որոնք ենթակա են վճարման որպես հետևանք կամ՝

- ընկերության որոշման՝ աշխատանքից ազատել աշխատակիցներին մինչև թոշակի անցնելու ընդունված ժամկետը, կամ

- աշխատակցի որոշման՝ աշխատակիցների թվաքանակի կրճատման դեպքում կամավոր ազատվել՝ փոխարենը ստանալով այդ նպաստները:

3.13 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալի ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

I. Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել Ընկերության կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

III. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

IV. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, փոխառությունները:

I. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկդ	161	161
Բանկային հաշիվներ (դրամային)	26,686	22,997
Բանկային հաշիվներ (արտարժույթային)	13,909	30
	40,756	23,188

5 Տրամադրված փոխառություններ

Փոխառությունը տրամադրվել է կապակցված կողմին՝ 138,181 հազ. դրամ և երրորդ կողմին՝ 4,970 հազ. դրամ, ընթացիկ են, անտոկոս և ապահովված չեն գրավով:

6 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր մատուցված ծառայությունների գծով	14,018	18
Դեբիտորական պարտքեր ԱԱՀ-ի գծով	13,289	7,948
Տրված կանխավճարներ	920	5,591
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	5,497	3,784
Դեբիտորական պարտքեր աշխատավարձի վճարման գծով	3	3
Այլ դեբիտորական պարտքեր	130	-
	33,857	17,344

7 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Վարձակալված ՀՄ-ների վրա կատարված կապիտալ ծախսեր /Մարզադաշտ/	Համակարգչային տեխնիկա	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական և տնտեսական գույք	Օգտագործման իրավունքով ակտիվ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>							
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	185,262	11,681	7,333	7,180	18,331	-	229,787
Ավելացում, կապիտալացում	-	1,172	1,442	-	157	-	2,771
Օտարում	-	-	-	-	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	185,262	12,853	8,775	7,180	18,488	-	232,558
Ավելացում	-	-	-	-	-	35,000	35,000
Դուրսգրում	-	-	-	-	-	-	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	185,262	12,853	8,775	7,180	18,488	35,000	267,558
<i>Գուտակված մաշվածություն</i>							
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	91,087	10,552	6,797	6,352	16,482	-	131,270
Տարվա ծախս	11,825	1,287	275	335	487	-	14,209
Օտարում	-	-	-	-	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	102,912	11,839	7,072	6,687	16,969	-	145,479
Տարվա ծախս	11,825	564	310	335	498	2,625	16,157
Դուրսգրում	-	-	-	-	-	-	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	114,737	12,403	7,382	7,022	17,467	2,625	161,636
<i>Հաշվեկշռային արժեք</i>							
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	82,350	1,014	1,703	493	1,519	-	87,079
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	70,525	450	1,393	158	1,021	32,375	105,922

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 37,179 հազ. դրամ (2024թ. 36,074 հազ. դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են գրոյական հաշվեկշռային արժեքով:

Ընկերությունը հիմնական միջոցների ձեռքբերման գծով պայմանագրային պարտականություն չունի:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների նկատմամբ սահմանափակումներ չկան:

2025 թվականի ընթացքում Ընկերությունը ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ» ստանդարտի համաձայն ճանաչել է օգտագործման իրավունքով ակտիվ՝ մարզաառողջարարական համալիրը, վարձակալության պայմանագրի հիման վրա:

Ընկերությունը 2025թ. ապրիլի 1-ից վերականգնել է մարզաառողջարարական համալիրի վարձակալության պայմանագիրը՝ 10 տարի ժամկետով:

Վարձավճարները կատարվում են ամսական և կազմում են 599,471 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ: Ֆինանսական հաշվառման նպատակով վարձավճարները ճանաչվում են առանց ԱԱՀ-ի:

Պայմանագրի մեկնարկի պահին Ընկերությունը ճանաչել է օգտագործման իրավունքով ակտիվ և համապատասխան վարձակալության պարտավորություն՝ ապագա վարձավճարների ներկա արժեքով:

Զեղչման համար կիրառվել է Ընկերության փոխառության սահմանային տոկոսադրույքը՝ մոտավորապես 12% տարեկան:

Օգտագործման իրավունքով ակտիվը ամորտիզացվում է գծային մեթոդով՝ վարձակալության ողջ ժամկետի ընթացքում:

Ղեկավարությունը գնահատել է, որ պայմանագրով նախատեսված դադարեցման հնարավորության առկայությունը չի ազդում վարձակալության գնահատված ժամկետի վրա, և պայմանագրի ամբողջ ժամկետը համարվել է կիրառելի վարձակալության ժամկետ

Պայմանագրի սկզբնական ճանաչման պահին օգտագործման իրավունքով ակտիվը և համապատասխան վարձակալության գծով պարտավորությունը չափվել են ապագա վարձավճարների ներկա արժեքով:

Օգտագործման իրավունքով ակտիվը ամորտիզացվում է գծային մեթոդով՝ վարձակալության պայմանագրի գործողության ընթացքում: 2025 թվականի ընթացքում ճանաչվել է 2,625 հազ. դրամ ամորտիզացիոն ծախս, որի արդյունքում օգտագործման իրավունքով ակտիվի հաշվեկշռային արժեքը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 32,375 հազ. դրամ:

Վարձակալության պարտավորությունը սկզբնական ճանաչումից հետո չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվետու տարվա ընթացքում ճանաչվել է 2,720 հազ. դրամ ֆինանսական ծախս՝ վարձակալության պարտավորության գեղչման հաշվարկի հետ կապված:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարձակալության պարտավորությունը կազմել է 33,500 հազ. դրամ, որից.

- կարճաժամկետ մաս՝ 5,000 հազ. դրամ,
- երկարաժամկետ մաս՝ 28.500 հազ. դրամ:

8 Մեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանոնադրական կապիտալ	1,566,000	1,566,000
	1,566,000	1,566,000

Կանոնադրական կապիտալը կազմում է 1,566,000 հազ. դրամ, որը բաժանված է 3,132 բաժնեմասերի, յուրաքանչյուրը 500 հազ. դրամ, որոնք տեղաբաշխված են, լրիվ վճարված է և պատկանում են ծանոթագրություն 1-ում նշված սեփականատերերին:

9 Ստացված փոխառություններ

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Չապահովված փոխառություններ</i>				
Փոխառություններ կապակցված կողմերից	31,289	-	2,152	41,942
Փոխառություններ երրորդ կողմերից,	289,163	-	465,570	660,732
որից ստորադաս փոխառություններ, 12-18 ամիս ժամկետով,	255,163	-	341,162	-
Փոխառությունների զեղչում	-	-	(124,408)	-
	320,452	-	343,314	-
	320,452	-	343,314	702,674

Անվանում	Արժույթ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
		Արտարժույթ	հազ. դրամ	Արտարժույթ	հազ. դրամ
Մ.Էներգո Ինվեստ ՓԲԸ	AMD	-	255,163	-	255,163
Վարտան Լազարեթի Սիրմակես	AMD	-	2,149	-	2,149
Մոնթլան ՍՊԸ	AMD	-	187,002	-	236,423
ՖՄՏՄ ԴԻՍՏՐԻԲՅՈՒՇՆ ԼԻՄԻԹԻՆԳ	AMD	-	110,928	-	139,148
Լավսերտ ՓԲԸ	AMD	-	23,916	-	30,000
Հրաչ Կապրիելյան	AMD	-	-	-	1,751
Հրաչ Կապրիելյան	USD	-	-	17,000	6,751
Մուլտիկոնտինենտալ Դիստրիբյուշն Լիմիթեդը	AMD	-	34,000	-	-
Շվեդարիայի Ֆրանկ Սյուվլեր Ուոլչենդ ԲԸ	AMD	-	19,319	-	-
Սիրկապ Արմենիա ՓԲԸ	AMD	-	31,289	-	31,289
Ընդամենը		-	663,766	17,000	702,674

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
Բանկային օվերդրաֆտներ		-		-
Ընթացիկ փոխառություններ (ցապահանջ կամ ենթակա վճարման մինչև 12 ամիս ժամկետում)		320,452		-
Ոչ ընթացիկ փոխառություններ (ենթակա վճարման 12 ամսից երկար ժամկետում)		343,314		702,674
		663,766		702,674

Փոխառությունների հատուցման ժամանակացույց

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի	2024թ. դեկտեմբերի
	31-ի դրությամբ	31-ի դրությամբ
Փոխառությունների ժամկետներ		
Ցպահանջ	-	-
Մինչև 12 ամիս	320,452	-
Երկրորդ տարում	323,995	41,940
Երրորդից հինգերորդ (ներառյալ) տարում	-	660,734
Հինգ տարի անց	19,319	-
	663,766	702,674

Հաշվետու ժամանակաշրջանում ընկերությունը վերանայել է իր փոխառությունների պայմանները՝ նպատակ ունենալով բարելավել ֆինանսական կառուցվածքը և ապահովել գործունեության կայունությունը:

Փոխառությունների մեծ մասը դասակարգվել է որպես ստորադաս 12-18 ամիս ժամկետով, ինչը նշանակում է, որ դրանց մարումը ենթակա է միայն այլ պարտավորությունների ամբողջական մարումից հետո: Այսպիսի դասակարգումը նվազեցնում է ընկերության կարճաժամկետ վճարունակության ռիսկերը և նպաստում է ֆինանսական կայունության բարձրացմանը:

Հաշվի առնելով վերոնշյալ փոփոխությունները՝ ընկերությունը ճանաչել է համապատասխան ֆինանսական ազդեցությունը՝ զեղչված արժեքով գնահատման արդյունքում առաջացած տարբերությունը ճանաչելով որպես ֆինանսական եկամուտ:

Ղեկավարությունը գտնում է, որ վերոնշյալ փոփոխությունները նպաստում են ընկերության ֆինանսական դիրքի ամրապնդմանը և երկարաժամկետ կայուն զարգացմանը:

Ընտրված զեղչման տոկոսադրույքը արտացոլում է այն տոկոսադրույքը, որով ընկերությունը կարող էր ներգրավել համանման պայմաններով փոխառություն շուկայից:

Տոկոսադրույքի ընտրության ժամանակ հաշվի են առնվել շուկայական տվյալները, ինչպես նաև փոխառության առանձնահատկությունները, մասնավորապես դրա ստորադաս բնույթը և տոկոսադրույքի բացակայությունը:

Ընտրված 12% տոկոսադրույքը գնահատվել է որպես ողջամիտ և համապատասխանում է շուկայական միջավայրին:

Ստորադաս փոխառությունների ընդհանուր արժեքը կազմել է 596,325 հազ. դրամ:

10 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի	2024թ. դեկտեմբերի
	31-ի դրությամբ	31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	42,599	31,177
Կրեդիտորական պարտքեր կապակցված կողմերի գործառնական վարձակալության գծով	18,237	18,237
Կրեդիտորական պարտքեր գործառնական վարձակալության գծով	1,440	1,440
Ստացված կանխավճարներ	-	-
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	11,953	15,009

Աշխատավարձի գծով պարտք	42,860	24,070
Այլ կրեդիտորական պարտքեր	166	15
	117,255	89,948

11 Պահուստներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	27,446	12,804
Արձակուրդի պահուստի համալրում. գուտ	(2,529)	14,662
Տարեվերջի մնացորդ`	24,917	27,446
Ներառված ընթացիկ պարտավորություններում	24,917	27,446
Ներառված ոչ ընթացիկ պարտավորություններում	-	-

12 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	572	-
Ստացված շնորհներ	-	624
Շնորհից եկամուտ	(78)	(52)
Տարեվերջի մնացորդ	494	572

13 Գործառնական այլ եկամուտներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Նվիրաբերություններից եկամուտներ	-	-
Ակտիվներին վերաբերող շնորհից եկամուտներ	78	52
Արձակուրդի պահուստի հակադարձումից եկամուտ	2,549	-
Այլ եկամուտներ	4,528	3,151
	7,155	3,203

14 Գործառնական այլ ծախսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ուսումնամարզական հավաքներ և խաղային հանդիպումների ծախսեր	47,863	46,577
Վճարներ ՀՖՖ-ին	394	7,682
Բուժօգնության և դեղերի գծով ծախսեր	4,329	8,208

Վարձակալության գծով ծախսեր	5,065	2,028
Մարզումային, արտահագուստի և այլ պարագաների գծով ծախսեր	32,847	35,338
Հիմնական միջոցների սպասարկման և վերանորոգման ծախսեր	459	4,281
Աուդիտորական, հաշվապահական և խորհրդատվական ծախսեր	6,690	5,950
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	3,046	3,387
Խաղերի հետ կապված տուգանքներ	2,000	2,705
Պահերդակական ծախսեր	1,212	1,500
Բանկային և ապահովագրական ծախսեր	1,765	255
Զփոխհատուցվող հարկերից ծախսեր	-	-
Վառելիքի ծախս	1,250	1,401
Արձակուրդի պահուստի ծախս	-	14,662
Այլ ծախսեր	12,330	9,133
	119,250	143,107

15 Այլ ոչ գործառնական ծախսեր

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարկման ծախսեր	2,614	2,366
Տույժ, տուգանքների գծով ծախսեր	2,543	571
	5,157	2,937

16 Ֆինանսական եկամուտ/ծախս

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխառությունների զեղչումից եկամուտ	124,408	-
Հաշվեգրված տոկոսներ վարկերի գծով	-	(1,039)
Հաշվեգրված տոկոսներ փոխառությունների գծով	(2,720)	-
	121,688	(1,039)

17 Այլ ֆինանսական հոդվածներ, զուտ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը</i>		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,962	(948)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	(116)
Վարկեր և փոխառություններ	269	3,110
	6,231	2,046

18 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	-	-
Հետաձգված հարկ	(459)	2,025
	(459)	2,025

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև .

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Վնաս մինչև հարկումը	(37,726)		(439,345)	-
Շահութահարկ 18% (2024թ. 18 տոկոս)	(6,791)	18.00	(79,082)	18.00
Չնվազեցվող ծախսեր	6,332	(16.78)	81,107	(18.46)
Շահութահարկի գծով ծախս	(459)	1.22	2,025	(0.46)

19 Ֆինանսական գործիքներ

19.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.10-ում:

19.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Դեբիտորական պարտքեր</i>		
Առևտրային դեբիտորական պարտքեր	14,018	18
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	40,756	23,188
Տրված փոխառություններ	143,151	214,729
	197,925	237,935

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ

Ստացված փոխառություններ	663,766	702,674
Առևտրային կրեդիտորական պարտքեր	42,599	50,854
	706,365	753,528

20 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունն իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժույթային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

20.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ընկերության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին:

բ) Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով, հետևաբար ենթարկվում է արտարժույթային ռիսկին: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունը հիմնականում առաջանում է դրամական միջոցներից, ստացված փոխառություններից:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

21 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

22 Կապիտալի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները՝ բացահայտված ծանոթագրություն 9-ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա:

Հաշվարկը ներկայացվում է ստորև.

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	(511,561)	(473,376)
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	40,756	23,188
Կապիտալ	(552,317)	(496,564)
Ընդհանուր սեփական կապիտալ	(511,561)	(473,376)
Վարկեր և փոխառություններ	663,766	702,674
Ընդհանուր ֆինանսավորում	152,205	229,298
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	(3.63)	(2.17)

23 Պայմանականություններ

23.1 Գործարար միջավայր

Համաշխարհային տնտեսությունը շարունակում է գործել բարձր անորոշության պայմաններում՝ պայմանավորված աշխարհաքաղաքական լարվածությամբ, տարածաշրջանային հակամարտություններով և ֆինանսական շուկաների տատանումներով: Մասնավորապես, Ուկրաինայի շուրջ զարգացումները, ինչպես նաև Մերձավոր Արևելքում շարունակվող լարվածությունը, շարունակում են ազդել համաշխարհային տնտեսական ակտիվության, ներդրումային հոսքերի և սպառողական վարքագծի վրա:

Միևնույն ժամանակ, միջազգային սպորտային ոլորտը, այդ թվում՝ ֆուտբոլը, աստիճանաբար վերականգնվում է COVID-19 համավարակից հետո, ինչը նպաստում է տոմսերի վաճառքի, հովանավորչական եկամուտների և հեռարձակման իրավունքներից ստացվող եկամուտների աճին: Այնուամենայնիվ, ոլորտը շարունակում է մնալ զգայուն տնտեսական և քաղաքական փոփոխությունների նկատմամբ:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական ակտիվությունը վերջին տարիներին պահպանել է աճի միտում, սակայն շարունակում է ենթարկվել արտաքին գործոնների ազդեցությանը՝ ներառյալ փոխարժեքի տատանումները, գնաճային ճնշումները և տարածաշրջանային ռիսկերը: Սպորտային կազմակերպությունների գործունեության վրա էական ազդեցություն ունեն նաև պետական աջակցության մակարդակը, հովանավորչական շուկայի զարգացումը և միջազգային մրցաշարերին մասնակցության հնարավորությունները:

Ֆուտբոլային ակումբների գործունեությունը բնութագրվում է եկամուտների բարձր փոփոխականությամբ, որը կախված է մարզական արդյունքներից, միջազգային մրցաշարերում մասնակցությունից (մասնավորապես՝ ՈՒԵՖԱ-ի մրցաշարերից ստացվող եկամուտներից), ինչպես նաև հովանավորների և գործընկերների ներգրավվածությունից: Միևնույն ժամանակ, ակումբները ենթակա են կարգավորող պահանջների, այդ թվում՝ ՈՒԵՖԱ-ի ֆինանսական կանոնակարգերին, որոնք ազդում են ֆինանսական կայունության և կապիտալի կառավարման վրա:

Վերոնշյալ պայմաններում ընկերության ղեկավարությունը մշտապես գնահատում է արտաքին միջավայրի ազդեցությունը և ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ ապահովելու գործունեության շարունակականությունը և ֆինանսական կայունությունը:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Կազմակերպության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը

և վերջիններիս ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա կարող են տարբերվել Կազմակերպության ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա:

23.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Մա է պատճառը, որ Ընկերությունն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Ընկերությունն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասները:

23.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, հարկային մարմնի պարզաբանումներով, որոնք կարող են հակասական կամ տարընթերցումների տեղիք տալ: Հարկային մարմինները կարող են ստուգումների արդյունքում տույժ, տուգանքներ նշանակել: Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության՝ իր մեկնաբանությունների վրա: Սակայն հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և եթե դրանք հաստատվեն, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

23.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները, և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում, շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն և օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

23.5 Դատական հայցեր

2025թ. դեկտեմբերի 31-ի և սույն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ Ընկերության դեմ հարուցված դատական հայցեր կան, սակայն էական ազդեցություն չունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

24 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

Ընկերությունը չի կնքել այնպիսի պայմանագրեր, որոնք, կախված ապագա որևէ դեպքի/դեպքերի տեղի ունենալուց կամ չուներալուց, ենթադրում են հետագա վճարումներ:

25 Գործարքներ կապակցված կողմերի հետ

25.1 Վերահսկողություն

Ընկերության վերջնական վերահսկող են հանդիսանում Ընկերության բաժնետերերը:

Ներկայացվող հաշվետվությունների առումով կապակցված կողմերն են նաև համատեղ հսկողության տակ գտնվող կազմակերպությունները, գործադիր տնօրենը, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք:

Ընկերության բաժնետերեր՝ Հրաչ-Ներսես Կապրիելյանը և Վարտան Սիրմակեար հանդիսանում են «Սիրկապ Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետերերը՝ յուրաքանչյուրը 50 % բաժնեմասով:

Ընկերության բաժնետերեր՝ Հրաչ-Ներսես Կապրիելյանը և Վարտան Սիրմակեար հանդիսանում են «Իտարկո Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի բաժնետերերը՝ յուրաքանչյուրը 50 % բաժնեմասով:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքները հետևյալն են.

1. Գործարքներ վերջնական հսկողների հետ

Հազար դրամ	Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31- դրությամբ		2025թ.	Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31- դրությամբ	
Տրամադրված փոխառություն	116,388	-	(71,581)	187,969	
Ստացված փոխառություններ	2,149	(68,288)	59,784	10,653	
	Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31- դրությամբ		2024թ.	Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31- դրությամբ	
Տրամադրված փոխառություն	187,969	-	(31,031)	219,000	
Ստացված փոխառություններ	10,653	(129)	-	10,782	

2. Գործարքներ համատեղ հսկողության տակ գտնվող կազմակերպությունների հետ

Հազար դրամ	Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31- դրությամբ		2025թ.	Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31- դրությամբ	
Ձեռքբերումներ և ծառայություններ	10,474	-	6,489	3,985	
Վարձակալություն	18,237	-	-	18,237	
Ստացված փոխառություններ	31,289	-	-	31,289	
	Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31- դրությամբ		2024թ.	Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31- դրությամբ	
Ձեռքբերումներ և ծառայություններ	3,985	(761)	-	4,746	
Վարձակալություն	18,237	-	-	18,237	
Ստացված փոխառություններ	31,289	-	-	31,289	

3. Գործարքներ ղեկավարության հետ

Հազար դրամ	Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31- դրությամբ	2025թ.	Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31- դրությամբ
Աշխատավարձ	1,391 (16,538)	16,551	1,378
	Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31- դրությամբ	2024թ.	Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31- դրությամբ
Աշխատավարձ	1,378 (18,568)	19,946	-